



<< 05 >> 05 2016թ.

N -----

«Հետաքննող լրագրողներ» հասարակական  
կազմակերպության նախագահ,  
«Հետք» թերթի խմբագիր  
պարոն Է. Բաղդասարյանին

**Հարգելի պարոն Բաղդասարյան**

Ի պատասխան Ձեր 03.05.2016թ. N-118-h-8 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի անկախացումից հետո ՀՀ Արմավիրի մարզում կառուցվել են 12 եկեղեցիներ, մասնավորապես՝

- 1) Մեծամոր քաղաքի Սուրբ Ղազար եկեղեցի (օծում՝ 2005թ.)
- 2) Բաղրամյան (Էջմ.) համայնքի Սուրբ Վարդան եկեղեցի (օծում՝ 2009թ.)
- 3) Արգավանդ համայնքի Սուրբ Հովհաննես եկեղեցի (օծում՝ 2009թ.)
- 4) Շահումյան համայնքի Սուրբ Աստվածածին եկեղեցի (օծում՝ 2010թ.)
- 5) Նոր Կեսարիա համայնքի Սուրբ Բարսեղ Կեսարացի եկեղեցի (օծում՝ 2011թ.)
- 6) Աղավնատուն համայնքի Սուրբ Աննա եկեղեցի (օծում՝ 2012թ.)
- 7) Բերքաշատ համայնքի Սուրբ Խաչ եկեղեցի (օծում՝ 2012թ.)
- 8) Արմավիր քաղաքի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցի (օծում՝ 2014թ.)
- 9) Ջանֆիդա համայնքի Սուրբ Կարապետ եկեղեցի (օծում՝ 2014թ.)
- 10) Դալարիկ համայնքի Սուրբ Վարդան եկեղեցի (օծում՝ 2015թ.)
- 11) Առատաշեն համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի (օծում՝ 2015թ.)
- 12) Արևաշատ համայնքում եկեղեցու կառուցում (ընթացքի մեջ է):

Միաժամանակ հայտնում ենք, որ կառուցված եկեղեցիների մասին Ձեզ հետաքրքրող մնացած տեղեկատվությանը մարզպետարանը չի տնօրինում, ուստի, այն կարող եք ստանալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ